



ՀՆԱԳԵՏ ԻԳԻԹ ՂԱՐԻԲՅԱՆ

2012 թ. հոկտեմբերին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգիթ Գարեգինի Ղարիբյանը դարձավ 75 տարեկան:

Պատմաբանը ծնվել է գեղատեսիլ Մեղրաձոր գյուղում նախկին Հին Բայազետի գավառի Արծափից գաղթած հայտնի գերդաստանում: Երկրորդ աշխարհամարտից հետո Ղարիբյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան:

Ղարիբյանը սովորում է Երևանի Հովհ. Թումանյանի անվան դպրոցում՝ ցուցաբերելով գերազանց առաջադիմություն: Դեռևս պատանի հասակից նա մասնակցում է Կարմիր բլուրի պեղումներին, որպես բանվոր և դրանով կանխորոշվում է նրա հետագա կենսագրությունը:

1957 թ. նա զորակոչվում է խորհրդային բանակ: Ձորացրվելուց հետո 1960 թվականից ցայժմ Ղարիբյանը այլևս անբաժան մնաց Երևանի պետական համալսարանից ու միջնադարյան շրջանի հայ հնագիտությունից: 1960-1965 թթ. սովորելով համալսարանի պատմության ֆակուլտետում՝ Ղարիբյանը ընտրում է հնագիտություն մասնագիտությունը, գերազանց սովորելու համար արժանանում Հակոբ Մանանդյանի անվան կրթաթոշակին: Ուսանողական նստարանից նրան հետաքրքրել են հնագիտության խրթին հարցերը: Պատահական չպետք է համարել, որ դեռևս ուսանող ընթերցողի դատին է հանձնում «Դատավարական կարգը, ընտանեկան և ժառանգական իրավունքը ըստ Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագրքի» հոդվածը: Այնուհետև հրապարակում է «Մե՞կ, թե՞ երկու ուրարտական ամրոցներ Արմավիր և սբ. Դավիթ բլուրների տարածքում» հոդվածը ռուսերեն, որը Մոսկվայի կոնֆերանսում կարդացվել էր իբրև զեկուցում:

1965-1968 թթ. Ղարիբյանը ընդունվում է ԵՊՀ ասպիրանտուրա՝ միջնադարյան Հայաստանի հնագիտության գծով և հնարավորություն ունենում մասնակցելու Դվինի, Գառնիի և Արմավիրի հնագիտական արշավախմբերի պեղումներին՝ աշակերտելով նշանավոր հնագետների, ինչպիսիք էին Կ. Ղաֆադարյանը, Բ. Առաքելյանը, Գ. Տիրացյանը և ուրիշներ: Չեռք բերված փորձը և հմտությունը հնարավոր դարձրին, որ Ղարիբյանին վստահվի 1966 թվականին ինքնուրույն հնագիտական պեղումներ կատարել Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք Լոռեում:

1970 թ. «Լոռե բերդ-ամրոցը և նրա պեղումները» ատենախոսության համար նրան շնորհվեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Շուտով հնագետի հետաքրքրությունների առարկա է դառնում Թանահատ-Գլաձորը, որին նա նվիրեց իր կյանքի ավելի քան երկու տասնամյակը: Պեղումների և վիճակագրության արձանագրությունների համալիր քննության արդյունքը համադրելով մեր

պատմիչների ու հիշատակագիրների վկայություններին՝ վերջնականապես ճշգրտվեց միջնադարյան Հայաստանի հռչակավոր համալսարանի տեղադրությունը, նրա ուսուցիչների և սաների գործունեությունը: Պատահական չէ, որ 1996 թ. Ի. Ղարիբյանը պաշտպանեց դոկտորական ատենախոսություն՝ «Գլածոր» (տեղադրությունը, պեղումները և վիմագրերը) թեմայով:

Բջնի բնակավայրը իր միջնադարյան ամրոցով և տարբեր դարաշրջաններին վերաբերող հնություններով շուրջ երեսուն տարի եղել է Ղարիբյանի ուշադրության կենտրոնում: Այստեղ պատմաբան-հնագետը ուսանողների գործնական հնագիտություն դասավանդելու, գիտելիքներ տալու և վերլուծելու անկրկնելի դասեր է տվել:

Սպիտակ քաղաքի տարածքում Ա. Քալանթարյանի հետ Ի. Ղարիբյանը հայտնագործել է Արտաշես արքայի արամեատառ արձանագրության սահմանաքարերից մեկը:

Ի. Ղարիբյանին վերջին տասնամյակում հետաքրքրել են հայ մշակույթի բազմաթիվ ու բազմազան հարցեր: Կավե ծխամորճների թվագրության և կիրառության խնդիրը, միջնադարյան բաղնիքների և շատրվանների կառուցվածքը, աշխարհիկ և եկեղեցական գեղարվեստական մետաղը, Հայաստանով անցած օտար ճանապարհորդների նոթերը, հրաշագործ Գեղարդը, Գրիգոր Լուսավորչի աջը և այլն:

2006 թ. լույս տեսավ «Արծափ-Մեղրաձոր» ստվարածավալ մենագրությունը՝ նվիրված իր համագյուղացիների նախնիների հերոսական պայքարին՝ թուրքական լծից ազատվելու և նոր միջավայրում հայրենի գյուղ հիմնելու ու շենացնելու գործին, նրանց ազգագրական սովորություններին, 1831 թվականից մինչև 1918 թվականը պահպանված ծխամատյաններին:

Պրոֆեսոր Ի. Ղարիբյանը նաև հմուտ մանկավարժ է: 1968 թվականից մինչ այսօր դասախոսական աշխատանք է կատարում ԵՊՀ պատմության ֆակուլտետում՝ դասավանդելով մի շարք հիմնարար առարկաներ: Այսօր գիտության և կրթության տարբեր ոլորտներում աշխատող մեր շատ գործիչներ անցել են պրոֆեսորի հնագիտական, հատկապես միջնադարագիտական դպրոցը, նրա օգնությամբ հաղորդակից դարձել Հայաստանի անցյալին և այն ուսումնասիրող մեծերին՝ Գ. Հովսեփյանին, Յ. Օրբելուն, Կ. Տրեվերին, Կ. Ղաֆադարյանին, Ս. Բարխուդարյանին, Բ. Պիոտրովսկուն, Յ. Ջանփոլադյանին, Բ. Առաքելյանին, Գ. Տիրացյանին և այլոց: Նորաթուխ ուսանողները ամառային քննաշրջանին հաջորդող հնագիտական-ազգագրական դաշտային պրակտիկական անցնում են հենց Ի. Ղարիբյանի կազմած ծրագրով ու ղեկավարությամբ: Այս ամենով հանդերձ Ղարիբյանը նաև ուսումնական գործի հմուտ կազմակերպիչ է: 2001-ից մինչև 2010 թվականը նա ղեկավարում էր հնագիտության և ազգագրության ամբիոնի գործունեությունը, ինչպես նաև նրա գործուն մասնակցությամբ է կազմավորել մշակութաբանության բաժինը և ապագա ամբիոնը դեռևս 2003 թվականին:

Պրոֆեսոր Ղարիբյանը իր գիտամանկավարժական գործունեության ընթացքում բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով, դիպլոմներով ու մրցանակներով, 1967 թ. համալսարանի ոսկե մեդալով, իսկ 2009 թ. Հայաստանի Հանրապետության նախագահը նրան պարգևատրել է պատմաբանի համար ամենամվիրական «Մովսես Խորենացի» մեդալով:

Պրոֆեսոր Իգիթ Ղարիբյանը ընկերների և ուսանողության շրջանակներում հայտնի է որպես շիտակ, կամեցող, սկզբունքային, աշխատասեր անձնավորություն:

Նրա կարդացած դասախոսությունները միշտ բազմազան են, հետաքրքիր, խանդավառող, ինքը, որպես կանոն՝ արդարացի:

Ծննդյան 75-ամյակի առթիվ շնորհավորելով պրոֆեսոր Ղարիբյանին՝ նրա բոլոր գործընկերներն ու հարազատները հորեյարից սպասում են հետաքրքիր նոր ուսումնասիրություններ, հնագիտական նոր նախագծեր: Ցանկանում ենք երկար տարիների բեղմնավոր աշխատանք, առողջություն ու հաջողություն:

Պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Էդ. Մինասյան

Պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Յ. Ավետիսյան

Պատմ. գիտ. թեկ. Յ. Հակոբյան

